

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Շեն-Կոնցեռն» ՓԲԸ
15 հունիսի 2011թ. թիվ N 2011/4
բաժնետերերի արտահերթ ժողովում
«Շեն-Կոնցեռն» ՓԲԸ
Տնօրենների խորհրդի նախագահ

Ս. Բեգլարյան

“15” հունիսի 2011թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

«ՇԵՆ-ԿՈՆՑԵՌՆ» ՓԲԸ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՈՒԴԻՏՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՉԱՆՑ
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Երևան 2011թ.

ԳԼՈՒԽ 1.
Ընդհանուր դրույթներ

1. Կանոնակարգումը

1.1. Սույն Կանոնակարգը կանոնակարգում է «Շեն-Կոնցեռն» ՓԲԸ-ի ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացնող անձանց ներկայացվող չափանիշները:

2. Կառուցվածքը, հասկացությունները

2.1. Սույն Կանոնակարգը բաղկացած է՝

- Գլուխ 1՝ «Ընդհանուր դրույթներ»,
- Գլուխ 2՝ «Մրցույթի մասնակիցները, մրցույթի կազմակերպումը և անցկացումը»:

2.2. Սույն Կանոնակարգում օգտագործվող հասկացությունները սույն կանոնակարգի իմաստով ունեն հետևյալ նշանակությունը.

- «Ընկերություն»՝ «Շեն-Կոնցեռն» ՓԲԸ,
- «Կանոնակարգ»՝ Սույն կանոնակարգը,
- «Աուդիտ»՝ Ընկերության ֆինանսական հաշվետվությունների աուդիտ,
- «աուդիտորական կազմակերպության պատասխանատու աուդիտոր»՝ աուդիտորական կազմակերպության աուդիտորական եզրակացությունը ստորագրող աշխատակից,
- «աուդիտորական խումբ»՝ աուդիտորական կազմակերպության աշխատակիցների խումբ, որոնք անմիջականորեն ընդգրկված են Ընկերության աուդիտի իրականացման մեջ:

3. Ուժի մեջ մտնելը

3.1. Կանոնակարգն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից այն հաստատելու պահից և վերաբերում է 2011թ. և դրանից հետո աուդիտի իրականացմանը:

3.2. Կանոնակարգի Կանոնները ներքին իրավական ակտ են և ընդունվում են «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 128-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի օգոստոսի 4-ի «Հաշվետու թողարկողների ֆինանսատնտեսական գործունեության աուդիտն իրականացնող անձանց ներկայացվող չափանիշները» կանոնակարգ 4/09-ը հաստատելու մասին» թիվ 226-Ն որոշման համաձայն, հիմք ընդունելով՝ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2 հոդվածը:

3.3. Կանոնակարգի Կանոնները մեկնաբանվում են ելնելով արժեթղթերի շուկայի կարգավորման նպատակների առավել լիարժեք իրագործման և Հաճախորդների իրավունքների և օրինական շահերի ապահովման տեսանկյունից:

ԳԼՈՒԽ 2.
ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

4. Չափանիշները

4.1. Ընկերության աուդիտն իրականացնող կազմակերպությունը պետք է բավարարի հետևյալ նվազագույն չափանիշներին.

1) առնվազն 3 տարվա աուդիտորական գործունեության փորձ: Ընդ որում, այս չափանիշը չի տարածվում միջազգային ճանաչում ունեցող աուդիտորական կազմակերպությունների վրա (Համաշխարհային հաշվապահական տեղեկագրում հրապարակված և <http://firm-rankings.vr-financial-news.com> կայքում տեղադրված ցանկում ներառված ըստ եկամտաբերության լավագույն 10 աուդիտորական կազմակերպություններ),

2) աուդիտորական կազմակերպության պատասխանատու աուդիտորը պետք է ունենա աուդիտորի առնվազն 3 տարվա աշխատանքային փորձ և միջազգային հաշվապահական և (կամ)

աուդիտորական որակավորման (օրինակ՝ Էյ-Սի-Սի-Էյ, ՍԻ-ՓԻ-Էյ, Սի-Այ-Էս-Էյ) փուլերի առնվազն կեսը ավարտած լինելու փաստը հավաստող փաստաթուղթ (վկայական) կամ Հայաստանի աուդիտորների և հաշվապահների ասոցիացիայի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված մարմնի կողմից տրված աուդիտորի որակավորում,

3) աուդիտորական կազմակերպությունը հաշվետու թողարկողի հետ կնքվող պայմանագրով համաձայնություն է տալիս ՀՀ Կենտրոնական բանկի հրավերով մասնակցելու հաշվետու թողարկողի, աուդիտորական կազմակերպության և ՀՀ Կենտրոնական բանկի միջև արտաքին աուդիտի արդյունքների քննարկման համար կազմակերպվող եռակողմ հանդիպմանը:

5. Ընտրությունը

5.1. Ընկերության Տնօրենների խորհուրդը սահմանում է թվով 3 աուդիտորական կազմակերպությունների կարճ ցանկ, որոնք բավարարում են ընտրության նվազագույն չափանիշներին:

5.2. Քննարկումների արդյունքում Տնօրենների խորհուրդը որոշում է կայացնում Ընկերության ընդհանուր ժողովի հաստատմանը ներկայացնել աուդիտորական կազմակերպության թեկնածություն: Որոշումը կայացնելիս հաշվի են առնվում նաև հետևյալ հանգամանքները, գործոնները

- աուդիտորական կազմակերպության ընդհանուր փորձառությունը,
- մասնատիպ աշխատանքների իրականացման փորձառությունը,
- աուդիտորական խմբում ներգրավված որակավորված աուդիտորների տեսակարար կշիռը,
- աուդիտորական խմբում ներգրավված մասնագետների փորձառությունը,
- գինը,
- միևնույն պատասխանատու աուդիտորը կարող է իրականացնել առավելագույնը 3 անընդմեջ տարիների աուդիտը,
- ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ չափանիշներ, պայմաններ, որոնց դեպքում աուդիտորական կազմակերպությունները չեն կարող իրականացնել Ընկերության աուդիտը:

5.3. Ընդհանուր ժողովը հաստատում է աուդիտորական կազմակերպությանը, իսկ վերջինս հետ պայմանագիրը ստորագրում է Տնօրենների խորհրդի նախագահը:

5.4. Պայմանագիրը կնքվում է առավելագույնը 3 տարի ժամկետով:

**Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ
պրն. Ա. Ջավադյանին**

Հարգելի պարոն Ջավադյան

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հալիսի 28-ի «Հաշվետու թողարկողների ֆինանսատնտեսական գործունեության աուդիտն իրականացնող անձանց ներկայացվող չափանիշները կանոնակարգ 4/09-ը հաստատելու մասին» թիվ 226-Ն որոշման փոփոխության համաձայն Ձեզ եմ ներկայացնում 15.06.2011թ-ին ընդունված «Շեն-Կոնցեռն» ՓԲԸ-ի արտաքին աուդիտ իրականացնողի ընտրության համար մրցույթի իրականացման մասին նոր կանոնակարգը (կցվում է առդիր 3 թերթ):

Գործադիր տնօրեն

Պապ Բադալյան